ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**
   Վիկտորյա Քեշիշյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի փորձագետ

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ</u>**
   Մոլդովայի Հանրապետություն, ք. Քիշնև, 2024 թվականի դեկտեմբերի 2-ից 6-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**
   Միջազգային էներգետիկ գործակալություն (IEA)

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**
   EU4Energy ծրագրի շրջանակներում մասնակցություն «Միջսահմանային էներգահամակարգի ինտեգրում և առևտուր» թեմայով ֆորումին

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**
   Միջսահմանային ինտեգրված էներգահամակարգերի և առևտրի կենսական նշանակությունը EU4Energy ծրագրի շրջանակներում ընդգրկված երկրներում ճկուն, կայուն և անվտանգ էներգահամակարգերի գործունեության ապահովման համար (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա)

7. **<u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

Միջոցառման շրջանակներում ներկայացվեցին միջասահմանային էներգահամակարգերի ինտեգրման և առևտրի մարտահրավերներն ու առավելությունները, զեկույցներ՝ Արևելյան Եվրոպայի երկրներում կիրառվող մոտեցումների, պետական աջակցության, կարգավորման մեխանիզմների, թափանցիկ և հուսալի տվյալների բազայի նշանակության վերաբերյալ: Առանձին ելույթներով ներկայացվեցին եվրոպական մի շարք երկրների, ասիական էներգահամակարգի, ինչպես ամերիկյան ընկերությունների փորձը (EU 2017/1485 կարգավորում, անցումային ժամանակահատվածում վերականգնվող ռեսուրսների զարգացում և ինտեգրում ցանցին):

Նստաշրջաններից մեկը նվիրված էր EU4Energy ծրագրի շրջանակներում ընդգրկված երկրների տարածաշրջանային համագործակցության զարգացմանը, ենթակառուցվածքների պլանավորմանը և ինտեգրմանը, առևտրի կազմակերպման խնդիրներին: Ելույթներով հանդես եկան նաև Ուկրաինայի, Մոլդովայի, Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի ներկայացուցիչները:

Հայաստանի համար առավել հետաքրքիր էր Վրաստանի ներկայացուցչի կողմից ներկայացված զեկույցը Վրաստան – Ռումինիա Սևծովի հատակով անդրծովյան մալուխի ծրագրի (Ծրագիր) զարգացումների վերաբերյալ: Նշվեց,

որ Ծրագիրը ստորագրել են 4 երկրներ (Վրաստան, Ռումինիա, Ադրբեջան, Հունգարիա), սերտ համագործակցում են Թուրքիայի հետ, Ծրագրին մասնակցելու ցանկություն է արտահայտել նաև Բուլղարիան: Ներկայում ավարտվել է տեխնիկատնտեսական հիմնավորումը, մշակվել է մալուխի անցկացման ծրագիծը, Թուրքիայի համապատասխան մարմինների հետ քննարկվում են անհրաժեշտ թույլտվությունների ստացման հարցերը:
Անդրադարձ կատարվեց նաև տարածաշրջանային «կանաչ միջանցք» ծրագրին, որով նախատեսվում է դեպի Եվրոպա կանաչ էներգետիկայի արտահանում: Այդ համատեքստում նշվեց նաև Հայաստանի հնարավորությունները (7% ատոմային և 7% վերականգնվող/արևային էներգիա):

ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Պայմանավորվածություն ձեռք բերվեց հետագա անելիքների վերաբերյալ:

8. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Պայմանավորվածություն ձեռք բերվեց հետագա համագործակցության ձևաչափի, աշխատանքային հանդիպումների կազմակերպման անհրաժեշտության և իրականացման վերաբերյալ:

ՀՀ ՏԿԵ նախարարության էներգետիկայի
վարչության ՎԷ բաժնի փորձագետ Վ. Քեշիշյան